ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՎԻԹԱՎՅԱՆ Տ. Ա.

Մարդկային հասարակության, իսկ հետագայում նաև պետական կառույցների առաջացմանն ու զարգացմանը զուգընթաց, հետախուզությունը, որպես պետական գործունեության ուղղություն, զարգացել է գիտական, հասարակական ու քաղաքական մտքի առաջընթացին զուգահեռ[1]: Այն հնագույն մասնագիտություններից մեկն է[2], որը չունի հստակ սահմանում և յուրաքանչյուր պետությունում այդ գործունեության բնութագրման համար տրվել են տարատեսակ սահմանումներ հետախուզական գործունեությանը վերաբերող օրենքներում: Ընդհանուր առմամբ, այն կարելի է բնութագրել որպես հատուկ ծառայության մարմինների, կազմակերպությունների կամ առանձին անձանց կողմից իրականացվող գործունեության հատուկ ձև՝ ուղղված պետության ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկություններ ստանալուն և պետության հիմքերն ամրապնդելուն:

Սակայն ինչպես պատմական բոլոր ժամանակաշրջաններում, այսօր էլ հետախուզությունը որոշ երկրների կողմից օգտագործվում է իրենց նվաճողական քաղաքականությունն իրականացնելու նպատակով: Ադրբեջանի հետախուզությունը, սկսած 1918-1920 թթ. (հետախուզության հիմքերն այդ երկրում դրվել են 1919 թ.[3]) և 1991 թ. մինչ օրս, ծառայել է այդ երկրի ղեկավարությանը՝ Հայաստանի նկատմամբ հետախուզական քայքայիչ տարաբնույթ գործունեություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև մեծապես նպաստել է Ադրբեջանում ու Արցախում իրականացված հայ էթնիկ զտումների ու հայկական կոտորածների իրագործմանը, որոնց զոհ են գնացել տասնյակհազարավոր, բռնի տեղահանվել 100-հազարավոր հայորդիներ: Ադրբեջանական հետախուզական մարմինների գործունե-

---

[1] *Տե՛ս* Тер-Арутюнян А. *Некоторые актуальные вопросы разведывательной деятельности иностранных государств (21-й век, 2011, - 1 (17), с. 90):*

[2] *Տե՛ս* Колибаба С. *Разведка: этимология, https://www.proza.ru/2014/09/12/1607:*

[3] *Տե՛ս* Դավիթավյան Տ., *Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ ծառայությունները և դրանց գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության դեմ (1918-1920 թթ.) (21-րդ դար, 2014, - 4 (56), էջ 52-68):*

ության ուսումնասիրությունը ներկա հայ-ադրբեջանական զինված դիմակայության[4] պայմաններում ունի կարևոր նշանակություն, քանզի հայատյացությունն Ադրբեջանում տարածվում է պետական մակարդակով, իսկ դրան լծված են այդ երկրի իշխանությունները՝ ուժային ու հատուկ (այդ թվում՝ հետախուզական) կառույցների միջոցով:

Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) «Հետախուզական և հակահետախուզական գործունեության մասին» օրենքի (ընդունվել է 2004 թ.) համաձայն, հետախուզական գործունեությունը երկրի ազգային անվտանգության ապահովման նպատակով իրականացվող հատուկ գործունեություն է, որն իրականացվում է համապատասխան պետական մարմինների կողմից երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, ռազմական և այլ ոլորտներում ազգային շահերի պաշտպանության հետ կապված տեղեկատվության ձեռքբերմամբ և վերլուծությամբ[5]: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հետախուզական գործունեության իրավական հիմքերն են՝ ԱՀ Սահմանադրությունը, «Ազգային անվտանգության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքները, այլ օրենքներ և իրավական ակտեր, ԱՀ միջազգային պայմանագրերը[6]:

Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված են հետախուզական գործունեության սուբյեկտներն ու դրանց գործառույթները: Սուբյեկտները ԱՀ օրենսդրությամբ նախատեսված հետախուզական գործունեություն իրականացնող հատուկ ծառայությունների մարմիններն են, որոնց լիազորությունների շրջանակը սահմանվում է ԱՀ գործադիր իշխանության մարմինների կողմից: Հետախուզական ուժերը, օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, հետախուզական գործունեություն ծավալող մարմինների աշխատակիցներն են, իսկ միջոցները՝ նրանց հետ բացահայտ և գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, տեխնիկական և տարատեսակ այլ միջոցները (հոդված 16):

ԱՀ-ում ներկայումս հետախուզական գործունեության սուբյեկտներ են հետևյալ հատուկ ծառայության մարմինները.

---

[4] *«Զինված դիմակայություն» եզրն օգտագործել է ՀՀ պաշտպանության փոխնախարար Դ. Տոնոյանը 2016 թ. հունվարի 22-ին ԶԼՄ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, տե՛ս* **Տոնոյան Դ.,** *Եթե ադրբեջանական ռեժիմը դիմի պատերազմի, ՀՀ ԶՈՒ-ն պատրաստ է՝ և՛ այսօր, և՛ վաղը, 22 հունվարի 2016 թ., http://artsakhpress.am/arm/news/36320/36320/ete-adrbejanakan-rezhimy-gna-paterazmi-hh-zu-n-patrast-e-ev%D5%9B-aysor-ev%D5%9B-vaxy-davit-tonoyan.html:*

[5] *Տե՛ս Kəşfiyyat və əks-kəşfiyyat fəaliyyəti haqqında Azərbaycan Respublikasının Qanunu (Հետախուզական և հակահետախուզական գործունեության մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքը), http://www.e-qanun.az/framework/5454, հոդվ. 1, կետ 1.1:*

[6] *Տե՛ս նույն տեղում, հոդվ. 2:*

1. Արտաքին հետախուզական ծառայությունը,
2. Պաշտպանության նախարարության հետախուզության գլխավոր վարչությունը,
3. Պետական սահմանապահ ծառայությունը (ՊՍԾ)[7],
4. Կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության Էլեկտրոնային անվտանգության կենտրոնը (ԷԱԿ)[8]:

ԱՀ արտաքին հետախուզության ծառայությունը ստեղծվել է 2015 թ. դեկտեմբերի 14-ին ԱՀ նախագահ Ի. Ալիևի հրամանագրով, որով լուծարվեց Ազգային անվտանգության նախարարությունը և դրա հիման վրա ստեղծվեցին երկու հատուկ ծառայություններ՝ Պետական անվտանգության ծառայությունը և Արտաքին հետա-խուզական ծառայությունը[9]: Մինչ այդ՝ հետախուզական գործու-նեություն ծավալում էր ԱՀ գործադիր իշխանության կազմում գտնվող Ազգային անվտանգության նախարարության հետախուզության գլխավոր վարչությունը: Սկսած 2015 թ. հոկտեմբերի կեսերից՝ ԱՀ նախկին Ազգային անվտանգության նախարարությունում (ԱԱՆ) բացա-հայտվեց հանցագործությունների մի շղթա՝ կապված այդ հատուկ ծառայությունում տիրող անօրինական բարքերի, բարձրաստիճան պաշտոնյաների կողմից անօրինական գործունեության հետ: Ընդհանուր առմամբ, երեք ամսվա ընթացքում զբաղեցրած պաշտոններից ազատվեցին ԱԱՆ 250 աշխատակիցներ, այդ թվում՝ նախարարը, տեղակալներ, վարչության պետեր, այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց մի մասը ձերբակալվեց[10]: Բացի պաշտոնանկություններից ու ձերբակալություններից, ԱՀ նախագահ Ի. Ալիևը 2015 թ. դեկտեմբերի 14-ի հրամանով լուծարեց Ազգային անվտանգության նախարարությունը և ստեղծեց վերոնշյալ երկու կառույցները[11]: Պետական անվտանգության ծառայության ղեկավար

---

[7] Տե՛ս ԱՀ պետական սահմանապահ ծառայության պաշտոնական կայքէջը՝ http://www.dsx.gov.az/:

[8] Տե՛ս ԱՀ կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության Էլեկտրոնային անվտանգության կենտրոնի պաշտոնական կայքէջը՝ http://www.cert.az/:

[9] Տե՛ս MTN lƏğv edildi (ԱԱՆ-ն լուծարվել է, աղբր.), http://anspress.com/index.php?a=2&lng=az&cid=&nid=367243, 14.12.2015թ.:

[10] Տե՛ս **MƏdƏt Quliyev** (ԱՀ ազգային անվտանգության նախարարի նախկին տեղակալը, 14.12.2015 թ.-ից՝ Պետական անվտանգության ծառայության ղեկավարը), ,250 yararsız şƏxs MTN-dƏn çıxarılıbt (ԱԱՆ-ից 250 անպիտան անձ է հեռացվել, աղբր.), 11.12.2015 թ., http://azpolitika.info/?p=177327:

[11] Տե՛ս AzƏrbaycan Respublikasının DƏvlƏt TƏhlƏkƏsizliyi XidmƏtinin vƏ AzƏrbaycan Respublikasının Xarici KƏşfiyyat XidmƏtinin yaradılması haqqında AzƏrbaycan Respublikası Prezidentinin FƏrmanı edildi (Ադրբեջանի Հանրապետության պետական

նշանակվեց գեներալ-լեյտենանտ Մադաթ Գուլիևը[12], իսկ Արտաքին հետախուզության ծառայության պետ՝ Օրհան Սեդյար օղլի Սուլթանովը[13]: Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հատուկ ծառայությունների համակարգում ևս կատարվեցին նմանատիպ փոփոխություններ:

Արտաքին հետախուզական ծառայությունը զբաղվում է քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական հետախուզությամբ, իսկ ռազմական հետախուզություն իրականացնող մարմինը ԱՀ-ում Պաշտպանության նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզության գլխավոր վարչությունն (ՀԳՎ) է:

Զբաղեցնելով կենտրոնական դիրք ռազմական անվտանգու-թյան ապահովման համակարգում՝ ցանկացած երկրի զինված ուժերը հատուկ ծառայությունների տեղեկատվության հիմնական սպառողներն են: Ռազմական ոլորտի յուրահատկությունը հանգեցնում է նրան, որ զինված ուժերը ստեղծում են ռազմական հետախուզության սեփական կառույցները: Նմանօրինակ կառույցները կարող են ինքնուրույն կարգավիճակ ունենալ (օրինակ՝ ԱՄՆ-ում), ենթակա լինել Գլխավոր շտաբին (ՌԴ-ում) կամ ունենալ խառը ենթակայություն (Իսրայելում)[14]: Ադրբեջանի ռազմական հետախուզությունը գտնվում է ՊՆ կազմում՝ առանձին գլխավոր վար-չության կարգավիճակով: ՀԳՎ-ի գործունեության իրավական հիմ-քերն են՝ ԱՀ Սահմանադրությունը, ԱՀ նախագահի հրամաններն ու կարգադրությունները, ԱՀ ռազմական դոկտրինը, ԱՀ ազգային անվտանգության հայեցակարգը, «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայության մասին», «Պետական գաղտնիքի մասին» և ԱՀ այլ օրենքներ, ԶՈՒ կանոնագրքեր,

---

անվտանգության ծառայություն և Ադրբեջանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայություն ստեղծելու մասին Ադրբեջանի Հանրապետության նախագահի որոշումը, ադրբ.), 14 dekabr 2015, http://president.az/articles/17160:

[12] Տե՛ս M. Q. Quliyevin Azərbaycan Respublikasının DΦvlət Təhlükəsizliyi Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı (Մ. Գ. Գուլիևին Ադրբեջանի Հանրապետության պետական անվտանգության ծառայության ղեկավար նշանակելու մասին Ադրբեջանի Հանրապետության նախագահի հրամանը, ադրբ.), 14 dekabr 2015, http://president.az/ articles/17159:

[13] Տե՛ս O. S. Sultanovun Azərbaycan Respublikasının Xarici Kəşfiyyat Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı (Օ. Ս. Սուլթանովին Ադրբեջանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունում ղեկավար նշանակելու մասին Ադրբեջանի Հանրապետության նախագահի հրամանը, ադրբ.), 14 dekabr 2015, http://president.az/articles/17158:

[14] Տե՛ս **Հարությունյան Ա.,** Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում, Թուրքիա. անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, վերլուծական նյութեր, Ե., 2007, էջ 173-174:

կանոնադրություն-ներ, ՊՆ կանոնակարգող-իրավական ակտեր և այլն: 2014 թ. վար-չության պետ է նշանակվել գնդապետ Իլգար Մազանովը[15], որը փոխարինել է գեներալ-մայոր Ռահիմ Ջաֆարովին[16]: ՀԳՎ-ն զբաղվում է ռազմական բնույթի հետախուզական տեղեկա-տվության հայթայթմամբ ու վերլուծությամբ: Այն ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ ծավալում է տարատեսակ հետախուզական-քայքայիչ գործունե-ություն՝ հավաքելով ռազմական բնույթի տեղեկություններ, պատ-րաստելով դիվերսիոն-հետախուզական խմբեր, իրականացնելով դիվերսիոն-հետախուզական գործողություններ: ՀԳՎ-ն սերտորեն համագոր-ծակցում է Թուրքիայի համանման ծառայության՝ ԳՇ հե-տախուզության գլխավոր վարչության հետ: Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքվել են մի շարք պայմանագրեր, որոնցով էլ կարգավորվում է երկու երկրների միջև ինչպես ռազմական, այնպես էլ հետախուզական բնագավառի համագործակցությունը: Հատկանշական է մասնավո-րապես 2003 թ. մարտի 3-ին Անկարայում կնքված «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի գլխավոր շտաբի միջև ռազմական հետախուզության բնագավառում փոխադարձ համագործակցության մասին» պայմանագիրը[17], որով Ադրբեջանի ու Թուրքիայի հատուկ ծառայություններն իրականացնում են հետախուզական տեղեկատվության փոխանակում[18]: Թուրքական և ադրբեջանական հետախուզական և հատուկ նշանա-կության տարատեսակ ստորաբաժանումների ղեկավարները հա-ճախակի իրականացնում են փոխայցելություններ Թուրքիա և Ադրբեջան. դրանց ընթացքում կատարում են փորձի փոխանակում, մաս-նագիտական վերապատրաստումներ, համատեղ զորավարժություն-ներ: Հատկանշական է Թուրքիայի ԶՈՒ հատուկ նշանակու-թյան զորքերի հրամանատար գեներալ-մայոր Զեքայի Աքսաքալլրի՝ 2014 թ. նոյեմբերի 6-ի այցը Ադրբեջան, որից հետո՝ նոյեմբերի 9-ին, վերջինս մեկնել է առաջնագիծ, զրուցել Ադրբեջանի ԶՈՒ

---

[15] *Տե՛ս Ordumuzun baş kəşfiyyatçısı kimdir... (Մեր բանակի գլխավոր հետախույզն ո՞վ է ..., ադրբ.), 27.01.2014, http://virtualaz.org/bugun/17349:*

[16] *Տե՛ս Müdafiə Nazirliyində dəyişikliklər: proseslər və perspektivlər (Փոփո-խություններ պաշտպանության նախարարությունում. գործընթացներ և հեռա-նկարներ),http://www.ayna.az/2013/mudafie-nazirliyinde-deyisiklikler-prosesler-ve-perspektivler/:*

[17] *Տե՛ս* Овсепян Л., Иванов В. *Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Е., 2010, с. 63:*

[18] *Տե՛ս* Արշակյան Գ., Եղիազարյան Ա., *Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ. (21-րդ դար, № 6 (46), Ե., 2012, էջ 39):*

զինծառայողների հետ, դիպուկահար հրացանի նշանառման օպտիկական համակարգով դիտել հայկական զինված ուժերի մարտական դիրքերը, մասնակցել զորավարժությանը[19]: Հետաքրքրություն առաջացրած այցն առավել մեծ ուշադրություն գրավեց առաջնագծում թուրք գեներալի՝ ադրբեջանցի զինվորներին ուղղված «ոգևորող» խոսքով. «Ձեզանով հպարտանում եմ: ...Թուրքիան մշտապես Ադրբեջանի կողքին է: Ադրբեջանի և Թուրքիայի զինվորներն անպարտելի են: Պատերազմներում մենք սա բազմիցս ցուցադրել ենք»[20]

Ադրբեջանի Հանրապետության ՊՍԾ հիմնական գործառույթը թեև ԱՀ պետական սահմանի պահպանությունն է, սակայն այդ ծառայությանը վերապահված են նաև օպերատիվ-մարտական, օպերատիվ-հետախուզական, որոնողական, ռազմական գործառույթներ[21]: Ծառայությունն իր գործունեությունն իրականացնում է ԱՀ Սահմանադրության հիման վրա, ԱՀ նախագահի հրամաններով, ԱՀ ռազմական դոկտրինով, ԶՈ կանոնագրքերով, «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայության մասին», «Պետական գաղտնիքի մասին», «Պետական սահմանի մասին», «Սահմանապահ զորքերի մասին», «Երկրից մեկնող, երկիր ժամանող և անձնագրերի մասին», ԱՀ այլ օրենքներով ու կանոնարկող-իրավական ակտերով[22]:

Ադրբեջանի Հանրապետության կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությանը կից էլեկտրոնային անվտանգության կենտրոնը ևս հետախուզական գործունեություն ծավալելու լիազորություն ունի: Այն հատուկ ծառայություններին բնորոշ գործունեություն իրականացնում է Կենտրոնի կանոնադրության 2.1.2 կետով նախատեսված (արտասահմանյան երկրների վերլուծական կառույցներից և այլ

---

[19] Տե՛ս Zekai Aksakallı: Azərbaycan və Türkiyə əsgəri yenilməzdir (Զեքայի Աքսաքալը. «Ադրբեջանի և Թուրքիայի զինվորներն անպարտելի են», աղբ.), https://www.youtube.com/watch?v=35Bc9gPQ-jk (ԹՀ հատուկ նշանակության ուժերի հրամանատարի և ԱՀ պաշտպանության նախարար Զ. Հասանովի՝ ԱՀ-ԼՂՀ շփման գիծ այցելությունը և զորավարժությանը մասնակցությունը լուսաբանող տեսանյութը):

[20] Տե՛ս **Պետրոսյան Գ.,** Թուրք բարձրաստիճան գեներալի՝ «հատուկ նշանակության» ելույթն առաջնագծում, 14.11.2014թ., http://allturkey.am/10840/ թուրք-բարձրաստիճան-գեներալի-հատուկ/#sthash.1wcAY0J4.dpbs:

[21] Տե՛ս Azərbaycan Respublikası DPvlət Sərhəd Xidməti (Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայություն, աղբ.), http://dsx.gov.az/ 1992-ci_ilden_sonra:

[22] Տե՛ս Azərbaycan Respublikası DPvlət Sərhəd Xidməti, qanunvericilik (Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայություն. օրենսդրություն, աղբ.), http://www.dsx.gov.az/qanunlar:

աղբյուրներից տեղեկությունների հավաքումը և վերլուծությունը) կարգով[23]*:*

1993-2015 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից ձերբակալվել են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված 15 գործակալներ[24]*, որոնք, հետախուզական բնույթի տարատեսակ տեղեկատվություն հայթայթելուն զուգահեռ, հանձնարարություն են ունեցել նաև իրականացնել ահաբեկչական գործողություններ: Հայ-ադրբեջանական սահմանի և դարաբաղա-ադրբեջանական շփման գծի երկայնքով իրականացվող դիվերսիոն-հետախուզական գործողությունները ևս կատարվում են ադրբեջանական հետախուզական տարբեր ստորաբաժանումների, դիվերսիոն-հետախուզական խմբերի կողմից, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան նաև 2016 թ. ապրիլի 2-ից 5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական գործողություններին:*

РАЗВЕДЫВАТЕЛЬНЫЕ ОРГАНЫ АЗЕРБАЙДЖАНА: ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И ПРАВОВЫЕ ОСНОВЫ ДЕЯТЕЛЬНОСТИ

ДАВИТАВЯН Т. А.

Резюме

Разведывательная деятельность Азербайджана регламентируется следующими нормативными правовыми актами: Конституция АР, Военная доктрина, Концепция национальной безопасности, указы президента, законы «О национальной безопасности», «О разведывательной и контрразведывательной деятельности», «О государственной тайне», а также другие законы и нормативные акты.

Уполномоченными органами АР, осуществляющими разведывательную деятельность, являются:

---

[23] *Sté́u Azərbaycan Respublikasının Rabitə və İnformasiya Texnologiyaları Nazirliyi yanında Elektron Təhlükəsizlik Mərkəzi haqqında esasname (Ադրբեջանի Հանրապետության կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությանը կից Էլեկտրոնային անվտանգության կենտրոնի կանոնադրություն, ադրբ.), http://www.cert.az/esasname.html:*

[24] *ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակցի օրվա առթիվ ՀՀ ԱԱԾ տնօրեն Գ.Գ. Հակոբյանի ելույթը, 18.12.2015 թ., http://www.sns.am/index.php/am/news/296-18122015 (հրումն արված է 22.12.2015 թ.): Հարկ է նշել, որ ՀՀ ԱԱԾ նախկին տնօրենի ելույթից հետո մինչ օրս ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից ձերբակալվել են պետական դավաճանության մեջ մեղադրվող ևս 5 անձինք:*

1. Служба внешней разведки;
2. Главное разведывательное управление Министерства обороны;
3. Государственная пограничная служба;
4. Электронный Центр безопасности Министерства связи и высоких технологий.

Разведывательная деятельность азербайджанских спецслужб является угрозой для национальной безопасности Республики Армении и НКР. Еще начиная с 1918-1920-х годов азербайджанская разведка внесла свой «вклад» в организацию этнических чисток и массовых убийств армян в Азербайджане и в Арцахе, что было продолжено в 1990-х годах. В результате названных событий были убиты и изувечены десятки тысяч, депортировано 100 тысяч армян. С 1993 года по настоящее время органами национальной безопасности Армении были изобличены и арестованы 20 государственных изменников и шпионов, завербованных разведывательными органами Азербайджана, которые выполняли поручения по сбору разведывательной информации, а также намеревались совершить террористические и диверсионные акты.

RECONNAISSANCE AGENCIES OF AZERBAIJAN: LEGAL BASES OF ACTIVITY AND THE MAIN DIRECTIONS

T. DAVITAVYAN

Abstract

Based on the Constitution, Military Doctrine, National Security Concept, presidential decrees, Laws on “National Security,” “Intelligence and Counterintelligence Activities,” “State Secret” and other legal acts of the Republic of Azerbaijan, the following special services have the authority to conduct intelligence-gathering activities:

1. Foreign Intelligence Service
2. General Intelligence Department of the Ministry of Defense
3. State Border Service
4. Cyber Security Center under the Ministry of Communication and High Technologies.

Reconnaissance activities of the Azerbaijani Special Forces pose a threat to the national security of Armenia and the NKR. Starting with 1918-1920 and 1991 until now, Azerbaijani intelligence has greatly contributed to the execution of the Armenian ethnic cleansing and massacres in Azerbaijan and Artsakh, which claimed tens of thousands of lives and forcibly displaced hundreds of thousands of Armenians. About 20 agents working for Azerbaijani intelligence agencies have been arrested by the Armenian National Security since 1993, who in addition to collecting intelligence information, were also instructed to carry out terrorist attacks.